ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- -------- 2025 թվականի №----Ա

«ԷՆԵՐԳՈ ԹՐԵՅԴ ՍԵՐՎԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է լիցենզիայի պայմաններին համապատասխան իրականացնել տեխնիկական (ներառյալ՝ տեխնոլոգիական կորուստների, վառելիքի տեսակարար ծախսի, սեփական կարիքների համար անհրաժեշտ էներգիայի կամ բնական գազի ծախսի և այլն) և (կամ) ֆինանսական աուդիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ,

բ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի փետրվարի 2-ի N37-Ա որոշմամբ «ԷՆԵՐԳՈ ԹՐԵՅԴ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված էլեկտրական էներգիայի մատակարարման ԼԷ №0691 լիցենզիայի պայմանների (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) 20-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո, իսկ տարեկան հաշվետվությունը բաժնետերերի կամ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու դեպքում՝ դրանց հաստատումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները ներկայացնել

Հանձնաժողով, ինչպես նաև հրապարակել իր և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am կայքում,

գ) Ընկերությունը 2024 թվականի ընթացքում Հանձնաժողով չի ներկայացրել իր 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները,

դ) Լիցենզիայի պայմանների 20-րդ կետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2025 թվականի հունվարի 9-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2025 թվականի հունվարի 9-ի ՆՄՄ/34.4-Մ2-1/72-2025 գրությամբ,

ե) Ընկերությունը հարուցված վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Լիցենզիայի պայմանների 20-րդ կետով սահմանված պահանջը,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լիցենզիայի պայմանների 20-րդ կետով սահմանված պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը պարտավորեցնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում իրականացնել 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և Լիցենզիայի պայմանների 20-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները ներկայացնել Հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2025թ.